

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

13.02.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Գ. Բաղդասարյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղբյանը, Ս. Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյան - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա/ ՀՀ Վարչապետի մոտ անցկացված խորհրդակցության արդյունքների և հանձնարարականների մասին
բ/ Մարզում 2017թ. նախատեսվող հրատապ ծրագրերի մասին
/Ա.Նալբանդյան/
2. ա/ Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների և կատարված աշխատանքների մասին
բ/ ՀՀ համապետական ընտրությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին
/Ջեկ. Ն.Սարգսյան/
3. Ինֆորմատիկա առարկա դասավանդողների շրջանում անցկացված հարցման արդյունքների մասին
/ Ջեկ. Լ.Ասլանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/ Ջեկ. Հ.Պապոյան/
5. Լոռու մարզի 2017-25թթ. ռազմավարության արդյունքները շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների հետ քննարկում կազմակերպելու մասին
/ Ջեկ. Հ.Մկրտչյան/
- 6.Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների, պարարտանյութերի բաշխման և պարտքերի հավաքագրման աշխատանքների մասին
/ Ջեկ. Գ.Հակոբյան/
7. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ. Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին`

ա/ Լոռու մարզի 2017-25 թթ-ի ռազմավարության հանրային քննարկումների ժամանակ արված ողջամիտ և իրատեսական առաջարկությունները սահմանված կարգով ներառել ռազմավարական ծրագրի մեջ.

բ/ Լոռու մարզի տնտեսվարողների հետ պարբերաբար աշխատանքներ իրականացնել և մեթոդական ու խորհրդատվական օժանդակություն ցուցաբերել` վերջիններիս կողմից իրատեսական ծրագրեր ներկայացնելու գործում օժանդակելու նպատակով և ծրագրերը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Կառավարության քննարկմանը:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համապետական ընտրությունների կազմակերպման և ըստ ժամանակացույցի սահմանված աշխատանքները իրականացնելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին`

Տեղեկացնել համայնքների ղեկավարներին, որ այսուհետ պետական աջակցության միջոցով ցորեն, պարարտանյութ և դիզելային վառելանյութ կհատկացվի միայն կանխիկ գումարով համայնքների կողմից հայտ-պահանջագրերի հիման վրա` նախապես վճարելու պայմանով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ